



Հայտարարություն մրցույթի մասին

Մրցույթի համարը 189/18

Պատվիրատուն՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար Սերվերային ծրագրային ապահովման և Սերվերային ծրագրի տարեկան սպասարկամ ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Սերվերային ծրագրային ապահովումն անհրաժեշտ է իրականացնել պայմանագրի երկկողմանի կնքման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում: Սերվերային ծրագրի տարեկան սպասարկումն անհրաժեշտ է իրականացնել 1 տարի: Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների/կապալառուների եւ երրորդ կողմի աշխատանքներ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Մասնագիտական փորձառություն, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, Տեխնիկական միջոցներ:** Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն մրցույթի հայտերի (տեխնիկական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով, փաստաթղթային ձևով **մինչև 2018թ մայիսի 3-ը, ժամը 10:00**, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեում, **2018թ. մայիսի 3-ին ժամը 10:00-ին:** Մասնակիցների **Մասնագիտական փորձառության, Ֆինանսական միջոցների, Աշխատանքային ռեսուրսների, Տեխնիկական միջոցների** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար մասնակիցները հայտով (տեխնիկական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

CONTOURGLOBAL®

Հիդրո կասկադ



Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք
դիմել գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանին:

Հեռախոս՝ 0284 50022

Էլ. փոստ arevik.nikolayan@contourglobal.com

Պատվիրատու՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ

<Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

*<Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար Սերվերային ծրագրային
ապահովման և Տարեկան սպասարկման ձեռքբերման նպատակով հայտարարված
մրցույթի*

Մույն հրավերը տրամադրվում է ի լրումն <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Սերվերային ծրագրային ապահովման և տարեկան սպասարկման ձեռքբերման նպատակով 189/18 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Մույն հրավերը կազմվել է <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների ուղեցույցի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Մույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arevik.nikolayan@contourglobal.com

ՄԱՍ 1.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հայտը ներկայացնելու կարգը
4. Հայտերի/առաջարկների բացումը և գնահատման կարգը
5. Պայմանագրի կնքումը
6. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

ՄԱՍ 1

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար՝ Սերվերային ծրագրային ապահովման և տարեկան սպասարկման ձեռքբերումը, որոնք խմբավորված են 2 չափաբաժնում:

<i>Չափաբաժինների համարը</i>	<i>Ապրանքի անվանումը</i>
1	VMware <u>սերվերային ծրագրային ապահովում</u>
2	VMware <u>սերվերային ծրագրի տարեկան սպասարկում</u>

Սերվերային ծրագրային ապահովման և տարեկան սպասարկման ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

Սույն հրավերով նախատեսված ապրանքների մատակարարման համար պահանջվում է հետևյալ լիցենզիան.

<i>Չափաբաժինների համարները</i>	<i>Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).</i>
1	2
1	<u>Չի պահանջվում</u>

Ընկերությունները պետք է հանդիսանան VMware օրինական վերավաճառող:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ,
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայտբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին,

բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միննայն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին: Կից ներկայացնելով վերջին մեկ տարվա ընթացքում կատարված առնվազն մեկ պայամանագիր:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում Սերվերային ծրագրային ապահովումը և տարեկան սպասարկում իրականացնելը: Ընդ որում, նմանատիպ պայմանագրի կամ պայամանագրերի հանրագումարը չպետք է պակաս լինի 1 000 000 ՀՀ դրամից:

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Կից ներկայացնել նախորդ տարվա

հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, Շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: (տեղեկանք հարկային տեսչությունից):

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին: Մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված աշխատողների անձնագրերի պատճենները, Աշխատանքային պայմանագրեր պատճենները:

3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն):

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

3.4 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

4) իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

5) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

6) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2018թ մայիսի 3-ը, ժամը՝ <<10:00>>-ին, ք. Գորյա Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2 Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական

պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Մասնակիցները կարող են առաջարկել ներկայացված գնից ավելի ցածր գին նախօրոք սահմանված ժամկետներում: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին: Պայմանագիրը ուղարկվում է ընտրված Մատակարարին ստորագրման

համար:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Գնման պատվերին/Պայմանագրին:

5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

5.1 Գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1 Նախքան պայամանագիր կնքելը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հաստատում է, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիրատուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Մատակարարի վարվեցողության կանոնագիրք (հավելված 6) և Վաճարողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Վերոնշյալ արձանագրությունները կազմում են պայմանագրի անբաժանելի մաս և կցվում են:

8.2 <Քոնթուրգլորբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր <Քոնթուրգլորբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

CONTOURGLOBAL



Տեխնիկական բնութագիր
Technical description

Document no.
Փաստաթղթի N

Sheet / էջ

1

-

3

Project
Նախագիծ

COMPUTER SOFTWARE
ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Security Index
Անվտանգության ինդեքս

Title
Անվանում

SERVER SOFTWARE REPLACEMENT
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՓՈՓՈՋՈՒՄ

00	06.03.2018	TR			
REV Վերանայում	Date Ամսաթիվ	Scope Ծավալ	A.Arekhtsyan Ա.Արեխյան Prepared Նախապատրաստել է	A.Melkumyan Ա. Մելքումյան Checked Ստուգել է	A.Yolyan Ա.Յոլյան Approved Հաստատել է



<i>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</i>		<i>CONTENTS</i>	
1.	Մատակարարման առարկան	Subject of the supply	
2.	Մատակարարման տեխնիկական պահանջները	Technical requirements of the supply	
3.	Մատակարարման ժամանակը	Timeframe of the supply	
4.	Մատակարարման վայրը	The location of supply	

1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

SUBJECT OF THE SUPPLY

<i>Տվյալ մատակարարման առարկա է հանդիսանում հետևյալ ապրանքները</i>		<i>The following items are the subject of the current supply</i>	
1.1	VMware սերվերային ծրագրային ապահովում	2	VMware Server software 2
1.2	Տարեկան սպասարկում	2	Annual support 2

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

TECHNICAL REQUIREMENTS OF SUPPLY

<p>2.1 Սերվերային ծրագրային ապահովում՝ VMware vSphere 6 Standard, 1 պրոցեսորի համար, ապրանքի կոդ՝ VS6-STD-C</p> <p>VMware ստանդարտ լիցենզիան 1 պրոցեսորի համար պարունակում է՝</p> <ul style="list-style-type: none"> - VMware Hypervisor or VMware ESX hypervisor ճարտարագիտություն(ոչ պարտադիր) - VMFS ֆայլային համակարգ - 5 տարբերակ Virtual SMP, VMware vCenter Server Agent, - VMware vStorage APIs/ VMware Consolidated Backup (VCB) պահուստային պատճենների համար - VMware թարմացումների կառավարում - VMware High Availability (HA), լիարժեք հասանելիության համար - VMware vStorage Thin Provisioning - VMware vMotion. <p>http://www.vmstore.co.uk/product/vmware-vsphere-6-standard-for-1-processor</p> <p><i>Տեղերի բոլոր դիմորդները պետք է հանդիսանան VMware օրինական վերավաճառող</i></p>	<p>2.1 Server software: VMware vSphere 6 Standard for 1 processor, part number: VS6-STD-C.</p> <p>The VMware vSphere Standard license for 1 processor is a cost-efficient solution which allows implementation of a basic, virtual environment, which consolidates applications and decreases the purchase and maintenance costs of hardware.</p> <p>The VMware vSphere Standard license for 1 processor contains:</p> <ul style="list-style-type: none"> - VMware Hypervisor or VMware ESX hypervisor architectures (optional), - VMFS (Virtual Machine File System), - 5-way Virtual SMP, VMware vCenter Server Agent, - VMware vStorage APIs/ VMware Consolidated Backup (VCB), - VMware Update Manager, - VMware High Availability (HA), - VMware vStorage Thin Provisioning, - VMware vMotion. <p>http://www.vmstore.co.uk/product/vmware-vsphere-6-standard-for-1-processor</p> <p><i>All applicants must be the VMware official reseller</i></p>
<p>2.2 Տարեկան տեխնիկական սպասարկում՝ VMware vSphere 6 Standard. 1 առողջարկի համար, սպասարկում</p>	<p>2.2 Basic Support/Subscription VMware vSphere 6</p>

CONTOURGLOBAL



Տեխնիկական բնութագիր
Technical description

Sheet / էջ

3

-

3

շաբաթը 5 օր, նախապես հայտարարված ժամերին

published hours.

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

TIME OF SUPPLY

Մատակարարումը պետք է կատարվի 20 օրվա ընթացքում, պայմանագրի ստորագրումից հետո

The supply should be carried out within 20 days, after signing the contract

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԱՅՐԸ

PLACE OF SUPPLY

“ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ” ՓԲԸ-ն պահեստը (ընդունման կետ) գտնվում է ՀՀ ք. Երևան, Մելիք 2/2 հասցեում”

The warehouse of |ContourGlobal Hydro Cascade CJSC (point of acceptance) is located in the city of Yerevan, 2/2 Melik-Adamyán str.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

SERVICE AGREEMENT #

ք. Երևան

---2018

Yerevan

---2018

«ՔՈՆՏՈՒՐԳԼՈԲԱԼ ՇԻՐՈՆ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, այսուհետ՝ Պատվիրատու և «-----»-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն -----ի, որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից, այսուհետ՝ Կատարող (Պատվիրատուն և Կատարողը միասին այսուհետ անվանվում են նաև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

"Contour Global Hydro Cascade" CJSC (hereinafter the Client) represented by Director Ara Hovsepyan, acting based on their Charter as one Party, and

«-----» - (hereinafter the Contractor) represented by General Director -----, acting based on their Charter as the second Party;

Hereunder the Client and the Contractor are jointly referred to as Parties; Executed this Service Agreement (hereinafter Agreement):

SUBJECT OF AGREEMENT

According to this Contract the Client shall entrust and the Contractor shall provide existing and already provided to the Client for -----"the Services"), and the Client is obliged to pay for the provided services. A detailed description of specific Services are described in details in Annex 1 attached hereto. Annex 2 attached hereto shall constitute an integral part of this Contract.

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի օգտագործման տրամադրել (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Ծառայության դիմաց: Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների նկարագրությունը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված 2-ում, որը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

RIGHTS AND RESPONSIBILITIES OF PARTIES

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 **Կատարողն իրավունք ունի՝**

- մատուցված ծառայությունների դիմաց ստանալ Պայմանագրով նախատեսված վճարը՝ ըստ Պայմանագրով սահմանված կարգի և ժամկետի,
- Պատվիրատուից պահանջել անհրաժեշտ տեղեկություններ Պայմանագրով

The Contractor shall be entitled to:

- Receive the payment for the Services in compliance with the terms and conditions of the Agreement;
- Request from the Client the relevant information to provide for the proper

սահմանված Ծառայությունների պատշաճ մատուցումն ապահովելու համար,

delivery of Services hereunder;

2.2 **Կատարողը պարտավոր է՝**

- Ծառայությունները մատուցել Պայմանագրի պահանջերին համապատասխան,
- իր աշխատանքի ընթացքում պահպանել Պատվիրատուի առևտրային, բանկային, ծառայողական և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների, ինչպես նաև Պատվիրատուի մտավոր սեփականությունը հանդիսացող տեղեկությունների գաղտնիությունը,
- հոգուտ իր անձնական շահերի կամ երրորդ անձի չօգտագործել Պայմանագրի կատարման կապակցությամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունները,
- առանց Պատվիրատուի համաձայնության նրա աշխատավայրից դուրս չհանել տեղեկություններ, ներառյալ փաստաթղթեր, ձայնասկավառակներ, տեսաերկրներ, նյութական կրիչներ և հիշողություն կամ տեղեկատվություն պարունակող այլ սարքավորումներ:
- Պատվիրատուի պահանջով 3 (երեք) օրվա ընթացքում ներկայացնել Ծառայության ընթացքի վերաբերյալ գրավոր հաշվետվություններ:

The Contractor shall:

- Render Services in compliance with terms and conditions hereof,
- Throughout the performance of the Agreement maintain the confidentiality of the Client's commercial, bank, trade secrecy and other information deemed classified and Client's intellectual property;
- Refrain from using the information obtained during the performance of the Agreement to the own benefit or in the interest of any third party;
- Refrain from removing from the office of the Client any information, including documents, CDs and DVDs and other media without the approval of the Client.
- within 3 (three) days upon Client's request, submit written reports on the progress of the services;

2.3 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

- Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված Ծառայության ընթացքը, առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը,
- Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով Կատարողից պահանջել Ծառայությունների պատշաճ որակով մատուցում:

The Client shall be entitled to:

- Check the process of service provided by contractor, without interfering the normal activity
- Demand rendering of Services on a timely basis and of adequate quality

2.4 **Պատվիրատուն պարտավոր է՝**

- Կատարողին վճարել Ծառայությունների մատուցման համար Պայմանագրի 3-րդ կետով նշված կարգով, չափով և ժամկետներում,

The Client shall:

- Pay the Contractor for Services in compliance with the terms and conditions determined in Clause 3 below;

- Կատարողին հնարավորություն տալ ծանոթանալու Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի գործունեությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվությանը և փաստաթղթերին:

- Afford opportunity to the Contractor to review the information and documents needed thereby while rendering the Services.

3. **ԿԱՏԱՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** **CONTRACTOR'S REPRESENTATIONS AND WARRANTIES**

3.1 Կատարողը հայտարարում և երաշխավորում է, որ. The Contractor represents and warrants that:

3.1.1 Ծրագրային ապահովումը կունենա սույն Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված հասանելիություն և խնդիրների վերացման կարգ, The Software should have the availability and troubleshooting in accordance with Annex 2 to the present Contract,

3.1.2 սույն Պայմանագրով սահմանված Օպերացիոնների մատուցման ընթացքում Պատվիրատուի կողմից տրամադրված ծրագրային ապահովման որևէ գործառնական կամ ֆունկցիոնալ փոփոխություն չի կատարվելու (բացառությամբ դրա թարմացումների և ավելացումների), ինչպես նաև ծրագրային ապահովման նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործման հնարավորությունը իր կողմից կամ այլապես իր մեղքով չի փոփոխվելու և/կամ որևէ այլ կերպ չի վնասվելու. during the provision of the Services defined in the Contract, no operational or functional modifications will be incorporated into the Software provided by the Contractor (save for updates and additions thereto), as well as the possibility to use the Software according to its purpose of use will not be changed and/or otherwise prejudiced by the Contractor or otherwise due to its fault;

3.1.3 Ծրագրային ապահովումը իր ողջամիտ իմացությամբ առավելագույնս չպետք է ունենա որևէ թերություն և/կամ խախտում և/կամ սխալ և/կամ շեղում և/կամ անսարքություն և/կամ այլ խնդիր, չի ունենա արտադրական և նյութական թերություն: Այդուհանդերձ, կողմերը սույնով ընդունում են, որ Ծրագրային ապահովումը տրամադրվում է «ինչպես որ կա» սկզբունքով, և ուստի դրա գործառնական to its reasonable knowledge the Software will be free from any defects and/or defaults and/or errors and/or deviations and/or faults and/or other problems, workmanship and material defects. Nevertheless the parties hereby acknowledge that the Software is provided on “as is” basis, and save for specific requirements and warranties expressly stated in this Contract, the Contractor does not grant any implicit or general warranties towards the

հնարավորությունների մասով Կատարողը սույն Պայմանագրում ուղղակիորեն նշված պահանջներից ու երաշխավորություններից բացի որևէ ենթադրյալ կամ ընդհանուր երաշխավորություններ չի տալիս: Կատարողը որևէ պատասխանատվություն չի ստանձնում Ծրագրային ապահովման հետ կապված որևէ խնդրի համար, որը կապված է Պատվիրատուի համակարգիչների կամ ցանցի կամ սերվերների կամ դրանց ծրագրային ապահովման որևէ փոփոխությունների կամ վնասվածքի հետ, արդյունք է Պատվիրատուի աշխատողների կողմից Ծրագրային ապահովման սխալ շահագործման, ինչպես նաև որը հետևանք է որևէ համակարգչային վիրուսի կամ նմանատիպ ծրագրի ներագդեցության,

Software. The Contractor does not assume any liability for any problems with the Software which relate to any changes to or damage of the Client's computers or network or servers or software operated thereon, or is due to wrong operation of the Software by the employees of the Client, or else are due to the impact of any virus or other similar software;

3.1.4 ունի համապատասխան լիցենզիա/իրավունք, ունի ամբողջական և անսահմանափակ իրավունք օգտագործելու և օգտագործման տրամադրելու երրորդ անձանց Ծրագրային ապահովումը, և հնարավորություն կտա Պատվիրատուին օգտագործել և տիրապետել այն ազատորեն՝ առանց որևէ երրորդ կողմի խոչընդոտի, ծանրաբեռնման կամ պահանջի

it has relevant licenses/rights and full and unrestricted right to use and provide for usage the Software to third parties, and hereby certifies and warrants that the Software, as well as the usage rights that are provided to the Contractor under this Contract are free from any limitations, encumbrance or claims of any third party;

3.1.5 Կատարողը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված հայտարարությունները և երաշխավորությունները խախտելու համար և պարտավոր է ամբողջությամբ փոխհատուցել այդպիսի երաշխիքների և հայտարարությունների խախտման արդյունքում Պատվիրատուին պատճառված վնասը:

The Contractor bears responsibility for the breach of the representations and warranties defined in this Contract and shall fully compensate for the losses caused to the Contractor thereby.

3.1.6 Կատարողն երաշխավորում և պարտավորվում է Ծառայությունները մատուցել ժամանակին, պատշաճ ձևով,

The Contractor warrants and undertakes to provide the Services in time, properly, with high quality and professional level, in

բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության, ինչպես նաև հաշվի առնելով Պատվիրատուի ցուցումներն ու պահանջներն այնքանով, որքանով որ դա էապես չի փոփոխում Ծառայությունների ծավալը և ըստ էության դուրս չի Հավելված 2-ում ներկայացված Ծառայությունների նկարագրությունից:

accordance with this Contract, legislation of Armenia, as well as taking into account the instructions and requirements of the Contractor to the extent they do not substantially alter the volume of the Services and are not I essence outside of the scope of the description of Services provided in Annex 2.

3.1.7 Կատարողն հայտարարում և երաշխավորում է, որ ունի համապատասխան քանակի ռեսուրսներ և հնարավորինս լավագույն ունակություններով օժտված որակավորված անձնակազմ Ծառայությունները սահմանված ժամկետներում մատուցելու համար:

The Contractor represents and warrants that it has enough resources and qualified staff with the best possible professional level to provide the Services within defined terms.

4 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

SERVICE PROVISION PROCESS

4.1 Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են սույն Պայմանագրի և Հավելված 2-ին և 3-ին համապատասխան պատշաճ որակով և Կատարողի լավագույն ունակության և ջանքի գործադրմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

The Services shall be provided in accordance with this Contract, Annex 2 and 3 of this Contract with sufficient quality and with reasonable skill and care of the Provider and in accordance with legislation requirements of Armenia.

4.2 Մատուցված ծառայություններում թերությունների հայտնաբերման դեպքում Կատարողը մատուցում է լրացուցիչ ծառայություններ պատշաճ որակով Պատվիրատուի նշած ժամկետներում սույն Պայմանագրի պահանջներին համապատասխանելու նպատակով առանց Պատվիրատուի համար լրացուցիչ ծախսի կամ Ծառայությունների գինը համապատասխանաբար կնվազեցվի հայտնաբերված թերությունների ծավալի

In case of revealed deficiencies in the Services provision the Provider shall provide additional Services with proper quality within the terms mentioned by the Contractor to comply to the requirements of this Contract at no additional cost to the Contractor or the price will be accordingly decreased based on the revealed deficiencies volume mentioned in the Acceptance Protocol in accordance with Annex 3.

չափով, որը կսահմանվի ընդունման-
հանձնման ակտով Հավելված 3-ին
համապատասխան:

4.3 Պայմանագրի 4.1 և 4.2 կետերի պահանջների
չկատարումը կարող է հանգեցնել
Պատվիրատուի կողմից Պայմանագրի
միակողմանի դադարեցման:

Non-fulfilment of the requirements provided
in Clause 4.1 and 4.2 shall be a ground for
unilateral termination of the Contract by
Contractor.

5. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ**

**PRICE OF AGREEMENT AND TERMS OF
PAYMENT**

5.1 Ծառայությունների դիմաց Պատվիրատուն
Կատարողին վճարում է -----:
Վճարումները կատարվում են յուրաքանչյուր
նախորդ հաշվետու ամսվա համար
մատուցված Ծառայությունների համար
հաշիվ-ապրանքագրի երկկողմանի
ստորագրման պահից 30 օրվա ընթացքում,
որով Պատվիրատուն կընդունի
Ծառայությունները և կհաստատի
Ծառայությունների մատուցումը սույն
Պայմանագրին համապատասխան: Հաշիվ-
ապրանքագիրը կհանդիսանա նաև
մատուցված Ծառայությունների հանձնման-
ընդունման ակտ:

The net price of the Services hereunder
comprises-----. Payments shall be made for
each preceding month within 30 days from
approval and bilateral signing of invoice by
which the Clinet shall accept the Services and
confirm the Services have been provided in
accordance with the Contract.

The invoice will be deemed as the Acceptance-
delivery act of the Services rendered.

6. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ**

**EFFECTIVCE PERIOD AND EARLY
TERMINATION OF AGREEMENT**

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում
երկկողմանի ստորագրման պահից և
գործում է մեկ տարի: Ծառայությունները
մատուցվում են Պայմանագրի գործողության
ողջ ընթացքում:

The Agreement shall come into effect from
bilateral signature of the Agreement
and remain in effect for one years. Services
shall be rendered throughout the duration of
the Agreement.

6.2 Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի
փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև
Պատվիրատուի կամ Կատարողի կողմից
Պայմանագրի պահանջների խախտման
հիմքով՝ ենթադրվող լուծման պահից
նախապես 15 օր առաջ մյուս Կողմին գրավոր
ծանուցելու պայմանով: Ընդ որում՝

The Agreement can be dissolved by the mutual
consent of Parties, and as well by the Client or
by the Contractor on the ground of breach of
requirements of the Agreement, by giving a 15-
day written notice to the second party prior to
the presumable date of termination. The Party
initiating the dissolution of the Agreement has

Պայմանագրի լուծման համար նախաձեռնություն ցուցաբերած Կողմը ծանուցման մեջ պետք է նշի Պայմանագրի խախտման հիմքերը, որոնց համար նա ցանկանում է դադարեցնել Պայմանագիրը:

6,3 Սույն Պայմանագիրը կարող է միակողմանիորեն դադարեցվել Պատվիրատուի կողմից առանց պատճառի՝ 15 օր առաջ Կատարողին գրավոր ծանուցելով և վճարելով փաստացի մատուցված ծառայությունների համար:

to state in the notice the grounds for breach of the Agreement causing the early termination of the Agreement by the particular party.

The Agreement can be terminated unilaterally by the Client without cause with 15 days written notice to the Contractor and upon payment for the actually provided services.

7. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ** **RESPONSIBILITIES OF PARTIES**

7.1 Կողմերը ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

The Parties are responsible for the failure or inadequate performance of their liabilities assumed thereby under the Agreement in compliance with the RA laws and the Agreement.

7.2 Պատվիրատուն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կատարողին վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում վերջինիս պահանջով վճարում է սույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր գումարի **0,1%-ի չափով**:

Upon the failure by the Client to pay the due amount to the Contractor in compliance with the terms and conditions hereof, the Client shall pay the Contractor a fine at the latter's request – **0.1%** of the total price of Services for each day of delay.

7.3 Ծառայությունների մատուցման ժամկետների խախտման համար Կատարողի համար պատասխանատվությունը սահմանվում է սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 3-ում:

The responsibility for breach of the terms of provision of the Services by the Contractor is defined in Annex 3, acting as an integral part of this Contract.

7.4 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

The Parties shall be relieved of their responsibilities for the full or partial nonperformance of their liabilities hereunder, if such nonperformance has been the result of a Force Majeure event occurring after the effective date of the Agreement and which the Parties could not have foreseen or prevented.

8. **ՄՏԱՎՈՐ ՄԵՓՈՎԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

INTELLECTUAL PROPERTY RIGHTS

- 8.1 Ծրագրային Ապահովման նկատմամբ Պատվիրատուին տրամադրվող իրավունքները ներառում են՝ The rights of the Client to the Software include the right:
- 8.1.1 իրավունք օգտագործելու Ծրագրային Ապահովումը Պատվիրատուի բիզնես նպատակների համար 4 չորս գույքահեռ օգտագործողների համար՝ տեղակայելով անսահմանափակ քանակով կայաններում: to use the Software for Client's business purposes for maximum 4 simultaneous users in indefinite number of sites.
- 8.1.2 իրավունք իրականացնելու Ծրագրային Ապահովման պատճեններ արխիվացման կամ պահուստային կամ արտակարգ իրավիճակների վերականգնման նպատակով և կոնկրետ յուրաքանչյուր արտադրական միավորի համար սպասարկման սրահների քանակին համապատասխան, առանց լրացուցիչ վարձատրության; to make backup copies of the Software for archival or backup or emergency recovery purposes and for each specific unit according to the number of service points, without any additional remuneration;
- 8.1.3 Պատվիրատուն իրավունք ունի օգտագործելու Ծրագրային ապահովումը օրենքով չարգելված բոլոր եղանակներով: The Client is entitled to use the Software in all manners not forbidden by law.
- 8.2. Վերը 8.1 կետում նշված բոլոր իրավունքները տրամադրվում են Պայմանագրի գործողության ժամկետով: All rights granted under clause 8.1 above are granted for the term of this Agreement.

9. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

OTHER PROVISIONS

- 9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական կատարումը: The Contract shall enter into force upon bilateral signature and shall be valid till full performance of obligation of the Parties.
- 9.2 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: Փոփոխությունները կհամարվեն օրինական, եթե Կողմերը դրանք իրականացրել են սույն Պայմանագրի ձևով՝ ստորագրելով մեկ ընդհանուր փաստաթուղթ: The amendments and additions to this Contract shall be discussed by the Parties mutually and defined in a separate amendment. The amendments shall be valid if the Parties have executed them in the form of this Contract by executing one mutual document.

- 9.3 Սույն Պայմանագիրը ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ: This Contract shall be governed by and interpreted in accordance with legislation of Armenia.
- 9.4 Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով: All notices of this Contract shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in this Contract.
- 9.5 Սույն պայմանագիրը կազմվել է երկու հավասարազոր բնօրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Լեզուների միջև անհամապատասխանության դեպքում, նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին: The present Contract was signed in two identical originals in Armenian and in English language. In the event of conflict between the English and Armenian language versions of this Contract, the Armenian language version shall prevail.
- 9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ դատարաններին: All disputes in relation to the Contract should be solved by negotiations between the parties hereto. In case the latter is impossible the dispute should be brought before the competent court of the Republic of Armenia.
- 9.7 Կողմերը հաստատում են, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիրատուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Կապալառուի վարվեցողության կանոնագիրը (հավելված 6) և Վաճարողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Կողմերը պարտավորվում են չներգրավվել որևէ գործունեության, որը կարող է ենթադրել տվյալ քաղաքականության պահանջների խախտում կամ հանգեցնել խախտման: Կողմերը համաձայնվում են, որ ցանկացած համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների հետ կապված, լինի գրավոր կամ այլ կերպ, ոչ՝ կողմերից որևէ The Parties acknowledge that in conducting their business and managing their internal relations, both the Performer and the Contractor operate by reference to the principles contained in the Contractor's Anticorruption Policy – Annex 5, the Performer Code of Conduct – Annex 6 and Vendor Certificate – Sanctions Laws - Annex 7 Policies. The Parties shall not engage in any conduct that would constitute a breach of these Policies or would result in a breach of these Policies. The Parties agree that, with respect to the services provided under any agreement, whether written or otherwise, neither it nor any of its principals, employees, affiliates, or to its knowledge, agents or representatives will directly or indirectly, make, promise or authorize the making of any offer, gift or payment of anything of value, including

մեկը, ոչ էլ նրա ղեկավարները, աշխատակիցները, դուստր ընկերությունները կամ նրա գիտությամբ՝ գործակալները կամ ներկայացուցիչները ուղղակի կամ անուղղակի ձևով չեն առաջարկի, խոստանա կամ թույլատրի նվերի տրամադրում կամ արժեքավոր որևէ այլ բանի վճարում, այդ թվում՝ առանց սահմանափակման, չեն կիսվի կամ չեն խոստանա կիսվել որևէ վճարումներով կամ դրամական այլ միջոցներով, որոնք ստացել են, ստանում են կամ կստանան ՔոնթուրԳլոբալի հետ որևէ համաձայնագրի շրջանակներում՝ ի շահ կամ ի օգուտ որևէ պետական պաշտոնյայի կամ որևէ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամի կամ մտերիմ գործընկերոջ, ոչ պատշաճ կերպով՝ (ա) ազդելով պետական պաշտոնյայի պաշտոնական դիրքով պայմանավորված որևէ գործողության կամ որոշման վրա, (բ) դրդելով պետական պաշտոնյային անել կամ չանել որևէ գործողություն՝ իր պաշտոնական պարտականությունների խախտմամբ, (գ) ստանալով որևէ ոչ պատշաճ առավելություն, կամ (դ) դրդելով պետական պաշտոնյային օգտագործել իր ազդեցությունը կառավարության որևէ որոշման կամ ակտի վրա ազդելու համար (վերոնշյալ «Արգելված վճարումներից» որևէ մեկը): Կողմերը պետք է անհապաղ զեկուցեն մյուս կողմին ցանկացած Արգելված վճարման մասին:

without limitation, the sharing or promise to share its fees or any other funds that it has received, receives or will receive under any agreement with ContourGlobal, to or for the benefit of any Government Official or family member or close business associate of any Government Official, for the purpose of improperly: (i) influencing any act or decision of the Government Official in his or her official capacity; (ii) inducing the Government Official to do or omit to do any act in violation of his or her lawful duty; (iii) securing any improper advantage; or (iv) inducing the Government Official to use his or her influence to affect any governmental act or decision (any of the foregoing a "Prohibited Payment").

The Parties shall promptly report to the other any Prohibited Payment.

9.7.1 Անկախ սույն Պայմանագրի ցանկացած այլ դրույթից, Պատվիրատուի պահանջով, Կապալառուն պետք է թույլ տա անկախ հաշվապահներին, բացի նրանցից, ովքեր ներկայացնում են Պատվիրատուին կամ Կապալառուին, որոնք ունեն համապատասխան որակավորում անցկացնելու քննություն և զեկուցելու

Notwithstanding any other provision of this Contract, upon request of Contractor, the Performer shall permit independent accountants, other than those who represent the Performer or the Contractor, that are suitably qualified to have full access to, conduct a review of, and report any suspicious or

Պատվիրատուին ցանկացած կասկածելի կամ խնդրահարույց հարցի մասին, որոնք վերաբերում են հետևյալին

(ա) Պատվիրատուի համար Կապալառուի կողմից կատարված աշխատանքների հետ կապված ցանկացած ֆինանսական գրքեր, հաշիվներ և գրառումներ, և

(բ) ցանկացած պայմանագիր կամ ենթապայմանագիր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են Պատվիրատուի համար կատարված աշխատանքի, նրան մատուցած ծառայության կամ սարքավորումների հետ, և

(գ) Պատվիրատուից ստացված միջոցներով կատարված կամ Պատվիրատուի համար կատարած աշխատանքի հետ կապված ցանկացած վճարում.

Բացի դրանից, եթե Պատվիրատուն ունի որևէ լուրջ մտահոգություն կամ ունի հիմք ենթադրելու, որ արգելված վճարում է կատարվել, խոստացվել կամ լիազորվել, ապա Կապալառուն պետք է բարեխղճորեն համագործակցի Պատվիրատուի և նրա ներկայացուցիչների հետ, պարզելու, այդ խախտումը տեղի է ունեցել, թե ոչ:

9.7.2 Անկախ սույն Պայմանագրի որևէ այլ դրույթից, Կապալառուն համաձայնում է, որ սույն 9.7 կետի որևէ խախտում բարեխղճորեն և իր հայեցողությամբ գործող Պատվիրատուի համար կհանդիսանա բավարար պատճառ ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր համարելու սույն պայմանագիրը, որի դեպքում Կապալառուն կզրկվի սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած լրացուցիչ վճարման պահանջի իրավունքից, բացի այն, որ նաև օրենքի սահմաններում պետք է պատասխանատվություն կրի պատճառած վնասի կամ դրանց լուծման համար:

questionable activity of any kind to Contractor in respect of:

(i) any financial books, accounts and records of the Performer related to the Works performed for the Contractor; and

(ii) any contracts or subcontracts that relate, directly or indirectly, to work performed for, or services or equipment provided to the Contractor; and

(iii) any payments made with funds received from Contractor or in connection with the work performed for Contractor

In addition, if Contractor has any reasonable concerns or has reason to believe that a Prohibited Payment has been made, promised or authorized, Performer shall cooperate in good faith with Contractor and its representatives in determining whether such a violation occurred.

Notwithstanding any other provision of this Contract, Performer agrees that any breach of this Clause 9.7 shall be sufficient cause for Contractor, acting in good faith and at its sole discretion, immediately to declare this Contract, in whole or in part, null and void, in which case Performer shall forfeit any claim to any additional payments due under this Contract in addition to being liable for any damages or remedies available under applicable law.

9.7.3 Կապալառուն ներկայացնում է երաշխավորում և համաձայնում, որ ոչ Կապալառուն, ոչ էլ Կապալառուի որևէ տնօրեն, աշխատակից, մասնաճյուղ/փոխկապակցված անձ, գործակալ կամ ներկայացուցիչ (համախմբված, «Գործընկերներ») (ա) պաշտոնապես չի մեղադրվել կամ դատապարտվել ցանկացած ֆինանսական հանցագործության համար (բ) չի ենթարկվել որևէ հետաքննության կամ ներգրավված եղել որևէ պաշտոնյայի կամ կառավարության ներկայացուցչի, կամ ստորաբաժանման, գործակալության կամ լծակի (որը ներառում է տարածաշրջանային կառավարման մարմինը կամ պետական պատկան մարմինները) օգտին որևէ վճարման կամ արժեքավոր իր տալու, կամ միջազգային հանրային կազմակերպության (օրինակ՝ Համաշխարհային բանկ, Եվրոպական համայնք կամ Աֆրիկյան զարգացման բանկ), կամ որևէ քաղաքական կուսակցության կամ կուսակցության պաշտոնյայի, կամ քաղաքական գրասենյակի թեկնածուի (վերը նշված «Կառավարության պաշտոնատար անձ») որևէ առաջարկի, վճարման կամ նվերի, վճարման խոստումի հետ կապված հարցման կամ վարույթի մեջ (պաշտոնական կամ ոչ պաշտոնական):

